

Ջետազոտական աշխատանք

<p>Կազմակերպության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Ջեռախոս 	<p>«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908</p>
<p>Ջետազոտության թեմա/վերնագիր</p> <ul style="list-style-type: none"> • Ջետազոտության թեմա 	<p><<Օրիգամի>>-ի պատրաստելու կարողությունների դերը որպես հիշողությունը զարգացնելու միջոց 1-ին դասարանում</p>
<p>Ուսուցչի տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Ջեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ 	<p>Լիլիթ Ջարությունյան Արտուշի Ուսուցիչ 098261554 Lilitharutyunyan760@gmail.com Տեխնոլոգիա I-VI</p>
<p>Ուսումնական հաստատության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանումը, հասցե • Ջեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե 	<p>Գայի անվան 129 հիմնական դպրոց 0101223196 Schol129@schools.am School129.safe.am</p>

Բովանդակություն


Ներածություն	3
Հիմնական բովանդակություն	4
Եզրակացություններ, առաջարկություններ	5
Օգտագործված գրականության ցանկ	6
Հավելվածներ	7

Ներածություն

<p>Նպատակը եւ հետազոտական հարցը</p>	<p>Արդյո՞ք <<Օրիգամի>> պատրաստելու կարողությունը նպաստու՞մ է 1-ին դասարանցիների հիշողության զարգացմանը:</p>
<p>Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը</p>	<p>Նպատակի ուսումնասիրությունը ուղղված է հետևյալ կոմպետենցիաներին. .լեզվական գրագիտություն և կարողություն .սովորել սովորելու կարողություն .մշակույթ .ինքնաճանաչում և սոցիալական կարողություն. .թվային մեդիա</p>
<p>Ջետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/</p>	<p>Առաջին դասարան 29 աշակերտ 19 տղա, 10 աղջիկ</p>
<p>Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)</p>	<p>Ջետազոտական աշխատանքի մեթոդներ</p> <ul style="list-style-type: none"> • Մտազրույց • Հարց ու պատասխան • Քննարկում • Վերլուծություն • Դիտարկում • Համագործակցային • Երկրորդ մեթոդ • Հիշողության զարգացման մեթոդ • թեմատիկ գրույց,


	<ul style="list-style-type: none"> • խաղեր, • անհատական գրույց • Մենմոնիկական կամ մենմոտեխնիկա
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	

Հիմնական բովանդակություն

<p>Գրականության ակնարկ</p> <ul style="list-style-type: none"> • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: <p><u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u></p>	<p>ՕՐԻԳԱՄԻ ԵՆԱՆԱԿՈՐ ՎԱՐՊԵՏՆԵՐ</p> <p>ՖՐԻԴՐԻԽ ՖՐԵԲԵԼ</p>  <p>Արդեն 19 -րդ դարի կեսերին մանկավարժ Ֆ.Ֆրեբելը նկատեց օրիգամիի երկրաչափական յուրահատկությունը և այն ներկայացրեց որպես դպրոցական առարկա: Եվրոպայում մանկա-վարժական պրակտիկայում օրիգամի օգտա-գործելու առաջին փորձերը իրավամբ կապված են գերմանացի հումանիստ Ֆրիդրիխ Վիլհելմ Օգոստոս Ֆրեբելի (1792-1852) անվան հետ, ով 19-րդ դարի սկզբին սկսեց մանկապարտեզներ ստեղծել, այնուհետև դպրոցներ: Նա առաջարկեց երկրաչափության հիմունքներն ուսումնա-սիրել ոչ թե կողմնա-ցույցի, քանոնի և որոշ հասկացությունների, այլ ծալովի թղթի պատ-կերների օրինակով: Նա</p>
---	--


ակտիվությունն մտցրեց օրիգամիի մանկավարժական գործընթացում:

ԻՈՇԻՉԱՎԱ ԱԿԻՐԱ



Յուրաքանչյուր օրիգամիստ պետք է իմանա նշանները և կարողանա դրանք օգտագործել գրելու համար: Բացի նշաններից, կա մի փոքր տեխնիկա, որը բավականին տարածված է: Սովորաբար դրանք տրվում են գրքերում՝ առանց մեկնաբանության: Ենթադրվում է, որ ցանկացած սկսնակ գիտի, թե ինչպես դա անել գործնականում: Միջազգային պայմանական նշանները, մի շարք պարզ տեխնիկայի հետ միասին, կազմում են մի տեսակ օրիգամիի «այբուբեն», որին ցանկացած մարդ պետք է ծանոթ լինի:

L. Ն. ՏՈԼՍՏՈՅ



<< Ժամանակի ընթացքում «օրիգամի»-ի արվեստը նվաճեց ամբողջ աշխարհը և հասավ մեզ>>:

Նույնիսկ մեծ L. Տոլստոյն իր «Ի՞նչ է արվեստը>> հոդվածում նկարագրեց մի դեպք, երբ Նրան սովորեցրին պատրաստել թուղթ, ծալել և շրջել այն հայտնի ձևով և

	<p>ստանալ աքաղաղ, որը թափահարում էր թևերը, երբ հարվածում էին պոչին:</p> <p>Լյուիս Քերոլը՝ «Ալիսը Հրաշքների աշխարհում» գրքի հեղինակը, ով մաթեմատիկա էր դասավանդում Օքսֆորդում, օրիգամիի սի-րահար էր: Քերոլի օրագրի գրառումները ցույց են տալիս, թե որքան ուրախացավ նա, երբ նա սովորեց, թե ինչպես ծալել խաղալիքը թղթից, որը ուժեղ հարված էր արձակում: ճոճվել «Ի՞նչ է արվեստը» հոդվածի նախագ-ծում նա գրում է. «Այս ձմռանը մի մայր ինձ սովորեցրեց պատրաստել թղթից, ծալելով և շրջելով այն որոշակի ձևով, աքլորներ, որոնք, երբ քաշում ես նրանց պոչերը, թափահարում են նրանց պոչերը, թևերը:</p>
<p>Հետազոտության ընթացքը</p>	<p>Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի օրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Ուսումնական գործունեությունը թույլ է տալիս զարգացնել սովորողին այնպիսի մի կարևոր իմացական ընդունակություն՝ օրիգամիի միջոցով, ինչպիսիս է հիշողությունը: Սույն աշխատանքի թեմայի արդիականությունը պայմանավորված է՝ մեր օրերում կրթության ոլորտում կատար-վող փոփոխություններով:</p> <p>Հետազոտությունը կատարել են՝ հենվելով <<Տեխնոլոգիա>> առարկայի բազմամյա իմ փորձի, առարկայի արդիական նվաճումների, գիտական նորագույն տեխնոլոգիաների, գործող չափորոշիչների և առկա ժամանակակից ձեռքբերումների հիման վրա:</p> <p>Հետազոտական աշխատանքիս նպատակն է ուսումնասիրել հիշողության գործընթացի զարգացումը առաջին դասարանում:</p>

Առաջին դասարանում հիշողությունը զարգացնելու միջոց ընտրել են <<Օրիգամի>>-ի պատրաստելը, քանզի օրիգամիի միջոցով զարգանում է սովորողի հիշողությունը: Նկատի ունենալով հայտնի ֆիզիոլոգ Ի. Մ. Սեչենովի այն միտքը, որ եթե մարդը հիշողություն չունենար, ապա միշտ կմնար նորածին մանկան վիճակում:

Մարդու հոգեկան կանխահայտ առանձնա-կատկություններից մեկը հիշողությունն է: Հիշողության տակ հասկանում ենք մեր անցյալ փորձի դրսեմունքը, պահպանումը, հետագա հա-նաչումն ու վերարտադրումը, որը հնարավորություն է տալիս կուտակել ինֆորմացիա՝ միաժամանակ չկորցնելով նախկին գիտելիք-ները, տեղեկությունները, հմտությունները:

Հիշողությունը ընկալված ինֆորմացիայի մտապահման, հոգեկանում պահպանելու և հետագայում վերարտադրելու երևույթն է;

Դասի ընթացքում երբեմն օգտագործվում են ցուցադրություններ (սլայդ), որոնք նպաստում են սովորողի տեսողական հիշողության զարգացմանը: Այս տարիքում սովորողի հիշողությունն ավելի զարգացած է, որը պայ-մանավորված է կրթության նորագույն ձևեր-բերումներով:

Հիշողության զարգացումը նպաստում է սովորողի մտա հմտություններ և կարողություններ ձևավորելուն:

Օրիգամիի հետազոտության աշխատանքի նպատակն է նպաստել '1'-ին դասարանցիներին գծագիր կարդալ սովորեցնելուն և պատկերացումների ու հիշողության զարգացման գործընթացի խթանելուն:

<<Երեխաների ընդունակությունների և շնորհի ակունքները նրանց մատների ծայրերին են: Պատկերավոր ասած մատներից հոսում են բարալիկ գետեր,որոնք սնուցում են նրանց ստեղծագործական միտքը>>

Վ.Ա.Սուխոմլինսկի Օրիգամիները մեզ վաղուց հայտնի թղթի ծալումով պատրաստվող նմուշներն են՝ բաժակ, շնիկ, բաղիկ բուլ,ինքնաթիռ և այլն:

Թղթի ծառանով մոդելները՝ ստեղծման արվեստն ավելի քան 2000 տարեկան է: Արվեստի այդ տեսակը սահմաններ չի փնտրում և մատչելի է և մեծերին, և փոքրերին:

Օրիգամին իր անվանումն ստացել է հապոներեն <<օրի>>՝ ծալել, և <<գամի>>՝ թուղթ, բառերից: Հնում օրիգամին ոչ միայն արվեստ էր, այլև հեզդուրություն և համբերատարություն ուսուցանող գիտություն: Բացի այդ, արևելքում օրիգամին համարվել է խաղաղության, հանգստության, ընտանեկան օջախի խորհրդանիշ:

Օրիգամին արվեստը ծնունդ է առել Չինաստանում I-II դարերի սահմանագծին, իսկ 4-րդ դարում այն թափանցել է Ճապոնիա և դարձել Ճապոնական մշակույթի անբաժանելի մասը:

Օրիգամին սովորողների համար մատչելի արվեստ է. մատչելի է թե՛ թուղթը, թե՛ թղթի մշակման պարզությունը: Երեխաները՝ թյամբ տիրապետում են թղթով գործողություններ կատարելու ձևերին ու հնարներին;

Սա պարզապես զվարճալի գործունեություն չէ, այն կարող է հաև հիանալի միջոց լինել՝ օգնելու սովորողներին զարգացնել կարևոր հմտություններ և նպաստել հիշողության զարգացման գործընթացին:

Այդ արվեստը և հիշողությունը սերտորեն կապված են իրար հետ:

Օրիգամին նպաստում է.

.Մտածողական զարգացմանը, ակտիվացնում է ստեղծագործական երևակայությունը, հիշողությունը և կառուցողական մտածողությունը :

.Հոգեկան որակների կազմավորմանը, զարգանում է սովորողի դիտողականությունը, հիշողությունը, կամային ուժեղությունը: Նա սովորում է հիշել, թե յուրաքանչյուր ծալումից, վերածալումից հետո ինչ գործողություն է հաջորդում:

.Ճանաչողական ակտիվությունը թոչնային, բուսական, կենդանական նմուշների հիման վրա աշխատանքներն օգնում են ավելի մոտ գտնվել և ամբողջական պատկերացում կազմել շրջակա միջավայրի մասին:

.Զարգանում են տարածության մեջ կողմնորոշվելու ունակությունները, հիշելով՝ սովորում և կիրառում են

կենտրոն, գագաթ, վերև-ներքև, ծուռ - շիտակ, աջ - ձախ, մեծ - փոքր հասկացու - թյունները:

.Բավարարվում է առկա հետաքրքրասիրությունը նրանք երկար ժամանակ դիտում են իրենց ձեռքով պատրաստած նմուշը, շոշափում, ուսումնասիրման ձևը, գույնը, ծավալը, հանաչում և հիշում:

. Ձևավորություն է ,հիշողության, ուրախության, համոզվածության հաղթանակ:

Օրիգամի պատրաստումը 6-7 տարիքի սովորողից պահանջում է՝ նախապես պլանավորել նախագծի յուրաքանչյուր փուլը: Սա նրանց սովորեցնում է որոշակի նպատակի վրա հիշողությամբ կենտրոնացած մնալու կարևորությունը:

.ուշադիր լսել ուսուցչի հրահանգները

.հիշել հաջորդականությունը

.կատարել ցուցումները

.անհրաժեշտ գործողություններ կատարելը մատներով

. հիշել կատարել հարթեցումը

.աշխատել հանգիստ ու մաքուր:

Անհրաժեշտ է կազմակերպել այնպիսի գործ-նական պարապմունքներ, որոնք կարող են խթանել սովորողի հիշողությունը, մատների մոտորիկայի զարգացումը: Սա էլ իր հերթին կնպաստի մարմնաշարժողական ուղջ համա - կարգի կատարելագործմանը: Այս խնդիրը հիմնականում դրված է <<Տեխնոլոգիա>> առարկայի ուսուցման հիմքում: Ուսուցման հիշել և նպատակային կազմա - կերպման արդյունքում ունենում ենք հիշողութ - յունը մտապահելու կարողություն , հմուտ, ֆիզիկ, վարժ ու շարժուն ձեռքերով սովորող:

Օրիգամի ուսուցման ժամանակ զարգանում են սովորողի տարածական պատկերացում - ներքը, հիշողությունը, մտածողությունը, խոսքը, նա սովորում է գծագրեր կարգալ՝ պայմանա - կան նշանների օգնությամբ: Զարգանում է գլխուղեղի երկու կիսագնդերի աշխատանքը: Սովորողներին պետք է սովորեցնել գծագիր կարգալ, մի ֆանի փայլ առաջ նայել, զարգացնել պատկերացումները՝ հիշողության զարգացման միջոցով: Օրիգամի զարգացումը հնարավոր - բություններն անսահման են: Օրիգամին

ակտիվացնում է ոչ միայն մտածական գործընթացները, այլև մեծ նշանակություն ունի երեխաների կառուցողական մտածողության զարգացման, նրանց ստեղծագործական երևա-կայության, գեղարվեստական հաճախի զարգացման գործում: Նրա միջոցով երեխա-ները ծանոթանում են երկրաչափական հիմ-նական հասկացություններին, զարգանում է նրանց աչքաչափը, բառապաշարը, գիտելիքները հարստանում է մասնագիտական եզրույթներ-բով: Ամենակարևորն այն օգնում է հիշողության կենտրոնացմանը: Հիշողության զարգաց-մանը նպաստում են օրիգամիի զանազան մեթոդների կիրառումը:

Լոկիի մեթոդ

Մեթոդը կոչվում է Լոկի' լատիներեն **loci**

<<տեղադրություն>> բառից: Այն կոչում են Հիշողության ամրոցի մեթոդ: Ովքեր չեն կարող ողջ հերթականության ֆայլերը պահել իրենց մտքում:

Մեթոդի էությունը հետևյալն է. <<կապել>> մեզ ծանոթ ֆայլերի հերթականությունը, և ինչպես պետք է դրանք մտապահել:

Օրիգամիին մտապահելը, հիշելը կարող է ծա-ռայել որպես վարժանքի մեթոդը յուրացնելու համար: Բայց երբ վստահ լինենք, որ առանց դժվարության հիշում ենք՝ կարող ենք, անցնել ավելի բարդ ու կարևոր օրիգամիներ մտա-պահելու գործին:

Մենմոտեխնիկա մեթոդ

. Հիշել օրիգամի հաջորդականությունը , խմբա-վորել և հորինել պատմություն: Այս մեթոդը օգտակար է, ինչպես հիշողության զարգացման , այնպես էլ նաև ստեղծագործական մտքի զարգացման համար:

Հոմեթական սենյակի մեթոդ

. Էությունը այն է, երբ որ փորձում ենք հիշել որևէ օրիգամի, դրանք տեղադրում ենք մտքով տարբեր տեղեր և հետո ստեղծում մի ընդհա-նուր պատկեր:

Մենմոնիկական մեթոդ

Մենմոնիկական և մեխանիկական հիշողու-թյունը:

Մենմոնիկական տարբերվում է <<մեխանիկական հիշողությունից>> օրիգամիի նմուշների առկայությամբ,

այնինչ մեխանիկա-րեն հիշելը անգիր սովորելն է:
Օրիգամիլի ին-ֆորմացիան մեխանիկորեն հիշվում է
կրկնուր-յան միջոցով կամ առանց կրկնելու
/ֆոտոհի-տոդություն/:

Հիշողություն /այլ կիրառումներ/

Հիշողությունը, իմացական գործընթաց է, որը կոչված է
կուտակելու, պահպանելու և վերար-տադրելու ձևով
բերված փորձը:

Հիշողության գործընթացներն են մտապահումը,
պահպանումը, վերարտադրումը և մոռացումը:

Տեսակներ

Հստ որակի

Պատկերավոր

Պատկերավոր հիշողությունը զգայական ինֆորմացիայի
պահպանումն է, հիշողություն՝ պատկերացումների, կյանքի
և բնության պատ-կերների միջոցով:

Էյդետիզմ

Էյդետիզմը (հին հունարեն՝ էյդոս-պատկեր, արտաքին
տեսք) հիշողության հատուկ արտա-հայտչաձև է,
հիմնականում դիտողական տպա-վորություններ:

Իմպրինտինգ

Իմպրինտինգը տպավորվելու մեխանիզմ է, այսինքն՝
հիշողության մեջ որոշակի ինֆոր-մացիայի ֆիքսում :

Ռեմինիսցենցիա

Ռեմինիսցենցիան հիշողության ամենահետա-գրիչ
արդյունքներից է: Այն ինչ-որ բանի պա-տահական ոչ
կամաձին մտաբերումն է: Մի բանի, որը վաղուց մոռացվել
է, և որը երկար ժամանակ մարդը չէր կարողանում հիշել:

Բառատրամաբանական

Բառատրամաբանական հիշողությունը արտա-հայտվում է
մարդկանց մտքերի մտապահման և վերարտադրման մեջ:

Շարժողական

Շարժողական հիշողությունը տարբեր շար-ժումների և
դրանց համակարգերի մտա-պահումը, պահպանումն ու
վերարտադրումն է:

Հուզական

Հուզական հիշողությունը կողմնորոշված է զգացմունքների
վրա:

/Ըստ գործունեության նպատակի՝

• կամային,

• ակամա:

Ըստ տևողության

• կարճատև,

• երկարատև

• օպերատիվ/

Մենեմոնիկան կամ մենեմոտեխնիկան՝ հիշողությունն

ամրապնդելու արվեստ է: Անվանումը կապված է

Մենեմոսինեի հետ:

Մենեմոնիկան և մեխանիկական հիշողությունը

Մենեմոնիկան տարբերվում է «մեխանիկական

հիշողությունից»՝ «տեխնիկայի» առկայությամբ, այնինչ

մեխանիկորեն հիշելը (անգիր սովորելը) գուրի է որևիցե

տեխնիկայից:

«Տեխնիկա» ասելով տվյալ դեպքում հասկանում ենք

պատկերացումների, համեմատությունների և

զգացմունքների օգտագործումը ինֆորմացիան հիշելու

ժամա - նակ:)

Մենեմոտեխնիկան վերականգնում է, ակտ - իվացնում է՝

զգայարանների միջոցով ինֆոր - մացիան ընկալելու

ուռակությունը:

Օրիգամին հարմար է բոլոր տարիքի

մարդկանց համար: Ե՛վ փոքր երեխաները,

որոնք սովորում են ձևերի և գույների մասին,

և՛ մեծահասակները, ովքեր փնտրում են

զվարճալի և ստեղծագործական

գործունեություն, կարող են վայելել այն:

Պարապմունքները կազմակերպվում են

թղթով, գործվածքով, բնական և

արհեստական, ինչպես նաև կառուցողական

տարրեր պարունակող նյութերով

աշխատանքներ:

Օրիգամիի տեսակներն ու տեխնիկան

Մոդուլային օրիգամի



Կուսուդամա

Օրիգամիի ամենահայտնի տարատեսակներից մեկը մոդուլային օրիգամին է, որում ամբողջա-կան պատկերն ստացվում է միանման մասերի՝ մոդուլների միավորումից: Յուրաքանչյուր մոդուլ պատրաստվում է դասական օրիգամիի պատ-րաստման եղանակով՝ մեկ քառակուսաձև թղդ-թով, իսկ այնուհետև մասերը միացվում են մեկը մյուսի մեջ ծալելու միջոցով: Մոդուլային օրի-գամիի պատրաստման տեխնիկայով հաճախ պատրաստվում են տուփեր, հարթ և տարածա-կան աստղեր, գնդաձև առարկաներ:

Պարզ օրիգամի

Պարզ օրիգամին օրիգամիի ոճ է, որ հորինվել է բրիտանացի Ջոն Սմիթի կողմից: Պարզ օրիգա-մին սահմանափակվում է հետ ու առաջ ծալում-ներով: Այս ոճի նպատակն է անփորձ օրիգա-միստների, ինչպես նաև շարժողական սահմանա-փակ կարողություններ ունեցող մարդկանց գոր-ծը հեշտացնելը :

Խոնավ ծալում

Խոնավ ծալումը ծալման տեխնիկա է, որ մշակել է Ակիրա Յոսիձավան: Օգտագործվում է ջրով թրջած թուղթ, որպեսզի պատկերներին հաղորդի հարթ գծեր, արտահայտչություն, ինչպես նաև կոշտությունը: Ոչ բոլոր թղթերն են հարմար թաց ծալման համար, միայն նրանք, որոնց արտադրության ընթացքում ավելացնում են ջրում լուծվող սոսինձ՝ մանրաթելերի սոսնձման համար: Որպես կանոն, այս

հատկությամբ օժտված են թղթի ստվար տեսակները:

Թուղթ և այլ նյութեր

Չնայած ծալելու համար հարմար է ցանկացած թուղթ, բայց վերջինիս ընտրությունը մեծապես ազդում է ինչպես ծալման գործընթացի, այնպես էլ մոդելի վերջնական տեսքի վրա:

Կա նաև հատուկ թուղթ օրիգամիի համար, որը հաճախ կոչվում է «կամի» (ճապոներեն՝ թուղթ): Այն անմիջապես վաճառվում է քառակուսու ձևով, կողմերի չափերը տատանվում են 2,5 սանտիմետրից մինչև 25 սմ և ավելի : Օրիգամիի թուղթը տպագրականից մի փոքր թեթև է, ինչն այն հարմար է դարձնում ֆիգուրաների լայն տեսականու համար:

Գոյություն ունեն օրիգամի պատրաստելու տարբեր ձևեր և եղանակներ, բազմապիսի պայմանական նշաններ, որոնք անհրաժեշտ են օրիգամին պատրաստելու ընթացքի սխեմա ձևավորելու համար: Պայմանական նշանների մեծ մասը կիրառության մեջ է դրվել 20-րդ դարի կեսերին հայտնի ճապոնացի վարպետ Ակիրա Յուսիձավայի կողմից (1911-2005):

Ուսուցման ճիշտ և նպատակային կազմա-կերպման արդյունքում ունենում ենք հմուտ, ճկուն, վարժ ու շարժուն ձեռքերով աշակերտ:

Օրիգամիի հաջողության բաղադրիչները

1. Օրիգամիի հնագույն արվեստում հաջողության հասնելու առաջին բաղադրիչը թուղթն է: Սովորաբար մենք փոքրիկներին միշտ թուղթ ենք առաջարկում ստեղծագործական առաջին որոնումները կատարելիս: Դեռ մեկ տարեկանում ևս հաճույքով խաղում էր ստվարաթղթե

տուփերով, հետո ուրախանալով պատռում էր լրագիրը, թերթում գրքերը:

2. Երկրորդ բաղադրիչը ձեռքերն են: Ծալելով օրիգամիի նմուշներ՝ փոքրիկն աշխատում է ձեռքերով: Երեխայի խոսքի զարգացման մակարդակն ուղղակիորեն կապված է ձեռքի մատների մանր շարժումներից:

3. Երրորդ բաղադրիչը ստեղծագործությունն է: Օրիգամին ծնվեց որպես շրջապատող աշխարհի առարկաները թղթի պլաստիկայի միջոցով փոխանցելու փորձ:

4. Օրիգամիի չորրորդ բաղադրիչը ավանդույթն է: Մինչև օրիգամիի որևէ մոդել պատրաստելը, ստեղծագործելը պետք է հիշել դասավորել մշակված օրիգամիի ծալման կանոնները, ուսումնասիրել հնագույն դասական մոդելները:

5. Օրիգամիի հաջողության վերջին բաղադրիչն ընտանիքն է: Օրիգամին նաև ընտանեկան արվեստ է:

Պատկերասրահ

Օրիգամի բոնսայի օրինակ

Ժողովրդական մշակույթում

«Խաղաթղթե տնակ» սերիալի առաջին եթերաշրջանի վեցերորդ Էպիզոդում Քլեր Անդերվուդն անտուն մարդուն տալիս է թղթադրամ, և վերջինս հետագայում վերադարձնում է թղթադրամը՝ ծալած թռչունի ձևով: Դրանից հետո Քլերն սկսում է պատրաստել օրիգամի կենդանիներ և յոթերորդ Էպիզոդում մի քանիսը տալիս է Փիթեր Ռուսոյին, որպեսզի փոխանցի իր երեխաներին:

	<p>«Սայրի վազորդ» (անգլ.՝ «Blade Runner») ֆիլմում Գաֆը պատրաստում է օրիգամի ֆիլմի ամբողջ ընթացքում, և միատեղյուրի ձևով պատրաստված օրիգամին կարևոր դեր է կատարում այուժեում: Յուն Յա Լի փիլիսոփայական-գիտաֆանտաստիկ «Ghostweight» ստեղծագործությունը ծավալվում է օրիգամի շուրջը: Պատմվածքում օրիգամին ծառայում է որպես պատմության փոխաբերություն. ճիշտ չէ, թե մեռյալին չի կարելի ծալել: Քառակուսին դառնում է օդապարիկ, դառնում է կարապ, պատմությունը դառնում է լուր, դառնում է երգ: Նույնիսկ հիշատակի ակտը աղավաղում է ճշմարտությունը»:</p>
--	--

Եզրակացություններ, առաջարկություններ

<p>Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին</p>	<p>Չետազոտական աշխատանքի կատարման ընթացքում տարբեր մեթոդների կիրառման միջոցով փորձեցինք աշակերտի մոտ զարգացնել հիշողությունը:</p> <p>Չետազոտական աշխատանքը իրականացրել են դիտարկման, ավանդական, փոխներգործուն, համագործակցական մեթոդների միջոցով:</p> <p>Մեր աշակերտը իրեն ինքնավստահ կզգա օգտակար ու հաճելի զբաղմունք ունենալու դեպքում:</p> <p>Օրիգամին զարգացնում է աշակերտի հիշողությունը, մտածողությունը, երևակայությոնը, խելքը, ֆիզիկական, մտավոր և ստեղծագործական հատկությունները: Այն օգնում է հենաշարժողական համակարգի խանգարումներ ունեցող, հոգեկան խանգարումներով մարդկանց. սովորեցնում թղթի հետ աշխատելու մեթոդներին:</p>
---	---

Իզուր չէ, որ լոգոպեդներն աշխատանքի այս տեսակն օգտագործում են իրենց պրակտիկայում:

Անհրաժեշտ հմտությունները ձեռք բերելու հա-մար պետք է ունենալ պարզապես թուղթ և սխեմաներ:

Ձեռքերի հետ միաժամանակ մարզվում են աշակերտի հիշողությունն ու տրամաբանությունը :

Օրիգամիի պատկերների ծալման ընթացքում մենք ծանոթանում ենք տարբեր երկրաչափական ձևերի հետ՝ եռանկյունի, քառակուսի և այլն, սովորում ենք հեշտությամբ նավարկել տարածության մեջ և թղթի վրա, ամբողջը բաժանել մասերի, գտնել ուղղահայաց, հորիզոնական, անկյունագծային, սովորել շատ ավելին, ինչը վերաբերում է երկրաչափությանը և մաթեմատիկային:

Աշակերտը իրեն ինքնավստահ է զգում յուրաքանչյուր նոր օրիգամի պատրաստելով:

Այլ տեղեկատվություն

Պատմություն



Օրիգամին սկիզբ է առել ճապոնիայում՝ 8-12դդ-ում: Օրիգամիի արվեստի արմատները

Հին Չինաստանում են, որտեղ հայտնագործվել է թուղթը:Սկզբում օրիգամին օգտագործվում էր կրոնական ծեսերի ժամանակ:

Թղթի գույնի ընտրությունը նույնպես շատ կարևոր էր:Սպիտակը շատ հարմար էր,բացի այդ սպիտակը ճապոնիայում համարվում էր աստվածային գույն:

12-16-րդ դդ-ում օրիգամին մուտք է գործում նաև կայսերական պալատ:

Պալատականները պարտավոր էին տիրապետել թուղթ ծալելու արվեստին:Շատ ազնվական ընտանիքներ թղթե պատկերները օգտագործում էին որպես գերբ կամ

կնիք:Գոյություն ունի հատուկ այբուբեն՝ օրիգամի սխեմաները գծելու համար: Այդ այբուբենի նշաններից շատերը ստեղծվել են 20-րդ դարի կեսերին ճապոնացի հայտնի վարպետ **Ակիրա Յոսիդզավայի** կողմից:

Միայն2-րդ համաշխարհային պատերազմից հետո օրիգամին մուտք գործեց Ամերիկա և եվրոպա: Հայաստանում նույնպես օրիգամին շատ երկրպագուներ ունի:

Օրգամի ասելով մարդիկ հասկանում են ծաղիկներ, ծիտիկներ, գորտիկներ պատրաստել թուղթը ծալելով, բայց օրիգամի հիմքում ընկած է երկրաչափական տրամաբանությունը,որի շնորհիվ ծալքերի շնորհիվ ստացվում են հրաշալի տարածական մարմիններ:

Չինաստանում ավանդական հողարկավորու-թյունների ժամանակ սովորաբար այրվել է ծալած թուղթ, որոնք մեծ մասամբ պատրաստվել են ոսկու բնակտորների (յուանբաո) ձևով: Փայտի կամ կավե կրկնօրինակների փոխարեն թուղթ այրելու սովորույթը վերագրվում է Սուն դինաստիայի իշխանության տարիներին (905-1125), սակայն հայտնի չէ, թե ինչպես է ծալվել թուղթը:

Ճապոնիայում թղթե մոդելների մասին առաջին հիշատակումը կատարվել է հիարա Սայկակուի կարծ բանաստեղծության մեջ 1680 թվականին. նա հիշատակել է ավանդական թղթե թիթեռներ, որ օգտագործվել են **սինտո** հարսանիքներում:

Եվրոպայում զարգացած է եղել անձեռոցիկներ ծալելու արվեստը: 19-րդ դարի սկզբին **Ֆրիդրիխ Ֆրյոբելը** թուղթ ծալելու զբաղմունքն առաջարկել է որպես ուսուցման մեթոդ մանկապարտեզներում երեխաների մոտորի-կայի զարգացման համար: 1900-ական թվականների սկզբին Ակիրա Իոշիգավան, Կոսյո Ուտիյաման և այլք սկսել են ստեղծել ու գրանցել օրիգինալ օրիգամի աշխատանքներ: Ակիրա Իոշիգավան կատարել է մի շարք հայտնագործություններ, որոնցից են խոնավ ծալումը և Իոշիգավան-Ռանդլեթի դիագրամաների համակարգը; 1980-ական թվականներին սկսել են համակարգված կերպով ուսումնասիրվել ծալված ձևերի մաթեմատիկական հատկությունները, ինչը նպաստել է օրիգամի մոդելների բարդացմանը:

Ջավելվածներ

Ջավելտվության կցված նյութեր

- Ջետագոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ



ՊԱՏԿԵՐԱՄՐԱՅ

Կավասակիի վարդ



Մեկ դոլարանոցից պատրաստված



փիղ,

մանիգամիի օրինակ



Կավասակիի խորանարդ.



Մոդուլային օրիգամիի երկու նմուշ



Թաց ծալումով պատրաստված ցուլ



Եզրակացություններ, առաջարկություններ

**Վերհանված
արդյունքներ,
Եզրակացություններ,
պատասխան
հետազոտական հարցին**

Հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում տարբեր մեթոդների կիրառման միջոցով փորձեցինք աշակերտի մոտ զարգացնել հիշողությունը:

Հետազոտական աշխատանքը իրականացրել են դիտարկման, ավանդական, փոխներգործուն, համագործակցական մեթոդների միջոցով: Մեր աշակերտը իրեն ինքնավստահ կզգա օգտակար ու հաճելի զբաղմունք ունենալու դեպքում:

Օրիգամին զարգացնում է աշակերտի հիշողությունը, ֆիզիկական, մտավոր և ստեղծագործական հատկությունները: Բժշկա-կան մասնագետները ասում են, որ այն թույլ է տալիս ավելի լավ օգտագործել հոգեկանի ռեսուրսները՝ ներդաշնակորեն զարգացնելով ուղեղի երկու կիսագնդերը: Երեխաները բարելավում են ձեռքերի նուրբ շարժիչ հմտությունները, մատների

շարժումներն ավելի ճշգրիտ են դառնում, ձևավորվում է համառոտություն: Բացի այդ, օրիգամին զարգաց-նում է հիշողությունը, մտածողությունը, տարածական երևակայությունը, արագ մտածելու կարողությունը: Իզուր չէ, որ լոգոպեդներն աշխատանքի այս տեսակն օգտագործում են իրենց պրակտիկայում: Այն նաև օգնում է ԿԱՊԿՈՒ /հենաշարժողական համակարգի խանգարումներ ունեցող, հոգեկան խանգարումներով երեխաներին:

Անհրաժեշտ հմտությունները ձեռք բերելու համար պետք է ունենալ պարզապես թուղթ և սխեմաներ:


Թղթից պատկերներ պատրաստելը ձեռքերի համար լավ մարզում է, այն զարգացնում է մանր մոտորիկան: Ձեռքերի հետ միաժամանակ մարզվում են աշակերտի հիշողությունն ու տրամաբանությունը: Օրիգամին կապված է երկրաչափության ,մաթեմատիկայի հետ, օրիգամին, որպես գիտություն, ի վիճակի է մեզ զարմացնել իր բազազան ձևերով: Օրիգամիի պատկերների ծավման ընթացքում մենք ծանոթանում ենք տարբեր երկրաչափական ձևերի հետ՝ եռանկյունի, քառակուսի և այլն, սովորում ենք հեշտությամբ նավարկել տարածության մեջ և թղթի վրա, ամբողջը բաժանել մասերի, գտնել ուղղահայաց, հորիզոնական, անկյունագծային, սովորել շատ ավելին, ինչը վերաբերում է երկրաչափությանը և մաթեմատիկային:

Աշակերտը իրեն ինքնավստահ է զգում յուրաքանչյուր նոր օրիգամի պատրաստելով:

Գրականություն

1. Պապիկյան Կ.Մ.-Օրիգամի 2008թ.
2. Պապիկյան Կ.Մ.- Տեխնոլոգիայի դասավանդման մեթոդիկա 2019թ

3. Ամեն ինչ Օրիգամի մասին ձեռնարկ: Սանկտ Պետերբուրգ. «Քրիստալ» հրատարակչություն, Մ. Օնիքս, 2005
4. Աֆոնսյին Ա.Յու. Օրիգամի դասերը դպրոցում և տանը. Փորձարարական դասագիրք տարրական դպրոցի համար, 5-րդ հրատ.
5. Վիքիպեդիա - 19.08.2022թ
6. Սուլխումլիսկի Վ. Ա. «100 խորհուրդ ուսուցչին», Եր., 1981 թ


Բառարաններ և
հանրագիտարաններ

[Բրիտանիկա \(օնլայն\)](#) · [Մեծ կառավարական](#) · [Մեծ նորվեգական](#) ·
[Universalis](#)

[Զախորոչային վերահսկողություն](#)

[Կատեգորիաներ:](#)

- [Արվեստ](#)
- [Ճապոներեն բառեր և արտահայտություններ](#)
- [Օրիգամի](#)
- [Ճապոնական հայտնագործություններ](#)